

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԱԱՀ) <<ԲԱԼԱՆՈՎԻՏ>> ԵՎ
<<ՈՍԿԵՀԱՏ>> ՈՒՍՈՒՄՆԱ-ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ (ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

ՄԻԱՎՈՐՄԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի <<Բալահովիտ>> և <<Ոսկեհատ>> ուսումնա-փորձնական մասնաճյուղերի (տնտեսությունների) միավորումը (այսուհետ՝ միավորում) ստեղծվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) գիտական խորհրդի որոշմամբ:
 2. Միավորումն իրավաբանական անձ չէ, Համալսարանի կառուցվածքային առանձնացված ստորաբաժանում է, մասնաճյուղի կարգավիճակով:
 3. Միավորման կանոնակարգը համալսարանի կանոնադրության 11-րդ կետի համաձայն հաստատում է ՀԱԱՀ խորհուրդը և որժողության մեջ է դրվում ՀԱԱՀ ռեկտորի հրամանով:
 4. Միավորումն իրավունք ունի իր անվամբ ունենալ կնիք և ձեռքդրեր:
 5. Միավորման լրիվ անվանումն է՝
հայերեն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի <<Բալահովիտ>> և <<Ոսկեհատ>> ուսումնափորձնական մասնաճյուղերի (տնտեսությունների) միավորում,
ռուսերեն՝ Объединение учебно-экспериментальных филиалов (хозяйств) «Балаовит» и «Воскеат Национального аграрного университета Армении»
1. Միավորման հասցեն է՝ Կոտայքի մարզ, Բալահովիտ

2. ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Միավորման հիմնական խնդիր է ՀԱԱՀ ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման ապահովումը, ինչպես նաև ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և գիտնականների կողմից իրականացվող գիտա-փորձնական բազայի ապահովումն ու արտադրանքների առաջնային վորձարկումները արտադրական պայմաններում:
8. Այդ խնդիրն իրագործելու նպատակով միավորումը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով կազմակերպում է ագրոպարենային կրթագիտական համակարգի սպասարկման համար ուսումնա-գիտաարտադրական անհրաժեշտ գործունեություն (բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրության և դրանց վերամշակման տեխնոլոգիաներ), որոնց արդյունքների իրացումից ստացված միջոցները (նյութական և ֆինանսական) ուղղվում են տնտեսության պահպանման ծախսերը հոգալուն՝ համալսարանի կողմից սահմանված կարգով:
9. Սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված ուսումնա-արտադրական գործունե- ությունը և դրա արդյունքների իրացումը կատարվում է ձեռնարկատիրական գործունեության կարգով՝ ՀՀ կառավարության 2001 թ. ապրիլի 27-ի «Հայկական գյուղատնտեսության ակադեմիան վերակազմակերպելու մասին թ. 471 որոշման 4-րդ կետի „Ը,, ենթակետով Համալսարանին տրված ուսումնա-արտադրական գործունեություն ծավալելու և արտադրանքի իրացման լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001 թ. հոկտեմբերի 10-ի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պայմաններով:
10. Միավորման արտադրա-տնտեսական գործունեության տարեկան ծրագիրն ու հաշվետվությունը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:
11. Միավորումը Համալսարանի միջոցով սահմանված կարգով կարող է ձեռք բերել անհրաժեշտ գույք և օգտագործել այն միավորման գործունեության համար:
12. Միավորման գույքն ու ֆինանսական միջոցները պատկանում են Համալսարանին
13. Միավորումը պարտավոր է
 - ա) ապահովել միավորմանը հատկացված գույքի պահպանությունը և ըստ նշանակության արդյունավետ օգտագործումը
 - բ) ապահովել բնապահպանական, սանիտարա-համաճարակային և հիգիենիկ անվտանգությունը ըստ սահմանված կանոնների

գ) ապահովել հաշվետվությունների և օրենսդրությամբ նախատեսված այդ կարգի այլ փաստաթղթերի ճիշտ կազմումը, վարումը և պահպանությունը, և պատասխանատվություն կրել դրանց ոչ ճիշտ վարման համար:

3. ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Միավորման կառավարումը իրականացնում է տնօրենը, որին սահմանված կարգով այդ պաշտոնին է նշանակում և պաշտոնից ազատում ՀԱԱՀ ռեկտորը:

15. Միավորման տնօրենը գործում է Համալսարանի կազմից տրված լիազորագրի հիման վրա:

16. Միավորման տնօրենը.

ա) իրեն տրված իրավասության սահմաններում կազմակերպում է միավորման գործունեությունը և պատասխանատվություն կրում այդ գործունեության համար

բ) սահմանված կարգով ՀԱԱՀ գիտական խորհրդի քննարկման է ներկայացնում միավորման տարեկան ծրագրերն ու ֆինանսա-տնտեսական հաշվետվությունները: Ֆինանսա-տնտեսական հաշվետվությունները ներկայացվում և ՀԱԱՀ գիտական խորհրդի քննարկմանը ՀԱԱՀ հաշվապահության միջոցով

գ) պատասխանատվություն է կրում միավորմանը հատկացված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև իր մեղքով այդ գույքին պատճառված վնասի համար

դ) իր իրավասության սահմաններում գործում է միավորման անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս հանձնարարություններ, արձակում կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է միավորման աշխատակիցների համար

ե) կարող է Համալսարանի ղեկավարությանը առաջարկություններ ներկայացնել տնտեսությունների վարչական և տնտեսական անձնակազմի աշխատանքի նշանակելու, աշխատանքից ազատելու, խրախուսելա կամ տույժի ենթարկելու վերաբերյալ

զ) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ գործունեություն, ելնելով միավորման գործունեության բնույթից ու առանձնահատկություններից

17. Միավորման բոլոր աշխատակիցների աշխատանքի վարձատրությունը կատարվում է տնտեսության արտադրական գործունեությունից կուտակված միջոցների հաշվին՝ համաձայնեցված ՀԱԱՀ ղեկավարության հետ:

18. Միավորման վերակազմումը կամ լուծարումը կատարվում է ՀԱԱՀ կանոնադրությամբ սահմանված կարգով